

հայկական եկեղեցու մասին: Հետո „Amsterdamer“-ի 1887 թ. սեպտեմբերի 4-ի համարում կա մի հոդված, որը լրացնում կամ սրբաբանում է վաղենաարի աշխատությունը:

Դր Ռոնեդը պատմում է, որ 1612 թ.-ից սկսած փոխադարձաբար ըողարկված առևտրական կապեր գոյություն ունեին մեր երկրի և Լեանտի ու Միջերկրականի նավահանգիստների միջև: Այդ կապը երկու կողմերին էլ երաշխավորում էր կրոնի ազատություն առավել ևս այն պատճառով, որ հայերի դավանությունը, որի մասին մենք խոսում ենք այժմ, ոչ մի ընդհանուր բան չունի Հռոմի հետ: Ուրեմն նրանց նույնպես չէր վերաբերում պապականների դեմ եղած հայտարարությունները: Արդյոք այն, ինչ ասում է այստեղ զր Ռոնեդը, ճիշտ է թե ոչ, արժանի է լուրջ հետադոտության: Հենց այդ էլ մենք կոսենք մեր այս հոդվածի շարունակության մեջ (Ամստերդամում 1666-ին Ոսկան եպիսկոպոսի կողմից տպագրված հայերեն աստվածաշնչի համար խնդրել են պապի հավանությունը): Պրոֆ. Զ. դը Լա Ֆոնտեն Վերվիլը բարի եղավ իմ ուշադրությունը հրավիրելու այն փաստի վրա, որ մի ժամանակ Ամստերդամում գոյություն ունեին հայկական երկու տարբեր եկեղեցական ուղղություններ: Թե ինչ բնույթ ունի այդ, դրանում ևս ձեռնահաս չեմ: 1650 թվականից համեմատաբար կարճ ժամանակ անց Ամստերդամում գոյություն ունեցող հայկական մի քանիսն մեծ գաղութ: Նրա ընդարձակման հետ զուգընթաց մեծացավ նաև հայերի հոգևոր, գույն և աշխարհիկ գրքերի կարիքը: Մենք տեսնում ենք 1666 թ. վերոհիշյալ հայ եպիսկոպոսի գալուստը Ամստերդամ, նա հատկապես լավ և նպատակահարմար ձևով ընդառաջեց իր համակերպացիների հոգեկան պահանջներին:

Գիտենք, որ Ամստերդամում հայերը առավելապես բնակարաններ փնտրում էին Նյուվմարքտի շրջակայքում: 18-րդ դարում նրանք նույնպես հիմնեցին իրենց եկեղեցին այս թաղամասում: Այդ մասին վաղենաարն ասում է. «Առևտրական հարաբերությունները Չմյուռնայի և Լեանտի հետ պատճառ դարձան նախորդ դարում, որ մի շարք ջրիստոնյա հայեր բնակություն հաստատեցին այստեղ: Նրանք իրենց կրոնական պարտականությունները (ժողովները) կատարում էին Դիկստրաստի վրա գտնվող մի տան մեջ: Բայց 1714 թ. նրանցից երկուսը եկեղեցական պետ Բարասան դե Սուլթանից և Նիկոլասս Թեոդորից թույլտվություն ստացան հիմնել նոր և ժողովրդական մի եկեղեցի, որտեղ նրանք հենց ներկայումս էլ օրական երկու անգամ, իսկ կիրակի օրերին երեք անգամ հավաքույթ են ունենում: Այդ եկեղեցին, որ մի գեղեցիկ շենք է, երկու շարք ապական պատուհաններով, կանգնած է Կայզերոստրատտ և Քոնինգստրատտ փողոցների արանքում Դիլաուս Բումսլուիթի ուղղությամբ: Նրանք այդտեղ ունեն եկեղեցական մի քանի սեղաններ, բայց ամբիոն չունեն: Եկեղեցին սպասարկում է մի քահանա, որին, համայնքի խնդրանքով, ուղարկել է այդտեղ Մեծ Հայաստանի պատրիարքը»:

Եթե վաղենաարի տեղեկությունները ճիշտ են, այդ դեպքում Ամստերդամի հայերը 17-րդ դարի երկրորդ կեսին,—այն ժամանակ, երբ հիմնեցին առաջին հայկական եկեղեցին,—հավաքվում էին աղոթելու համար Դիկստրաստի վրա գտնվող մի տան մեջ: Այդ բանից մենք կարող ենք հետևել նույնպես, որ Ոսկան եպիսկոպոսը ևս, որի մասին հետագայում ևս մանրամասն պիտի խոսենք, և որն այնչափ շատ բան է արել հայերեն լեզվով Աստվածաշնչը հրատարակելու համար,—կարող էր միաժամանակ ղեկավարած լինել կրոնական ժողովները Դիկստրաստի ժամանակավոր եկեղեցում:

* * *

Տպագրվելիք գրքերի համար տառեր պատրաստելու գործում հայերի կողմից ցուցաբերած ակտիվ գործողությունների մասին մենք հիշատակություններ ենք գտնում Ռոնեդի մոտ, ըստ որի 1658 թ. նոյեմբերի 27-ին հայազգի Մատթեոս Ավագը² պայմանագիր կնքեց էլզվեթների տոհմի հայտնի տառեր պատրաստող Խրիստոֆել վան Դեյկի հետ, որը խոստացավ պատրաստել 170 հայր տառեր և հայերեն տառերի 240 մայր տառեր՝ մեծ և փոքր չափերի: Այս հայր տառերի ու մայր տառերի համար պիտի վճարվեր 34 հինգսնետանոց դրամներով: Բացի դրանից, վան Դեյկը պահանջում էր ապրանքը հանձնելիս վճարել ևս 10 գուլդենի արտակարգ վարձատրություն իր կնոջ համար:

Հայերեն տառեր պատրաստելու և հայ լեզվով դասագրքույկներ տարածելու վերաբերյալ մենք կարող ենք հիշատակել Դր. Ս. Պ. Բուրգերի ուսումնասիրությունները „Het Boek“ պարբերականում (1927 և 1928 թթ.)³:

² Խոսքը Մատթեոս Մարեցու մասին է:

³ Ուր հեղինակն, ի դեպ, խոսում է նաև հայերեն այբուբեն պարունակող երկու սկզբնաղբյուրների մասին: